# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ՀՍԿ-ՇՀԱՊՁԲ 15/11-17/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «10» փետրվարի 2017թ.

ժամը՝ 14:00

2017թ-ի փետրվարի 10-ին ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 49 հասցեում, տեղի ունեցավ ՀՍԿ-ՇՀԱՊՁԲ 15/11-17/01 ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու համար ստեղծված գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստը (այսուհետ՝ նիստ): Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | |
|---|---|
| Վ Մարգարյան | «Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ տնօրենի օգնական-նախագահ |
| Գ.Սիմոնյան | «Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ – անդամ |
| Ա. Ասատրյան | «Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի Կրթամշակութային ծրագրերի իրականացման բաժնի պետ -անդամ |

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

| | |
|---|---|
| Ա. Սիմոնյան | «Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների գործընթացի մասնագետ |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վահե Մարգարյանը, իսկ քարտուղարն էր՝ Աննա Սիմոնյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. *ՀՍԿ-ՇՀԱՊՁԲ 15/11-17/01* ծածկագրով շրջանակային համաձայնագրին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց (այսուհետ՝ մասնակիցներ) մասին:

2. *ՀՍԿ-ՇՀԱՊՁԲ 15/11-17/01* ծածկագրով շրջանակային համաձայնագրի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:

3. *ՀՍԿ-ՇՀԱՊՁԲ 15/11-17/01* ծածկագրով շրջանակային համաձայնագրի առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարելու մասին:

մասին:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին.

## 1-ԻՆ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովի քարտուղար Աննա Սիմոնյանը հանձնաժողովին հայտնեց, որ *ՀՍԿ-ՇՀԱՊՁԲ 15/11-17/01* շրջանակային համաձայնագրին մասնակցելու հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում | Մասնակցի գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | <<Էկոմիքս>> ՍՊԸ | ՀՀ Երևան, Ա.Բաբաջանյան 60/2 |
| 2 | <<Մարինե-90>> ՍՊԸ | ՀՀ Երևան, Բարձրաբերդի 47 |

Որոշվեց՝

1. Աննա Սիմոնյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

## 2-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովը արձանագրեց, որ՝

1) Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են *ՀՍԿ-ՇՀԱՊՁԲ 15/11-17/01* շրջանակային համաձայնագրի հրավերով (այսուհետ՝ հրավեր) սահմանված կարգով.

2) Բացված յուրաքանչյուր ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը.

3) Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Որոշվեց՝

1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

## 3-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գները.

| Հ/Հ | Ծառայության անվանում | Մասնակցի անվանումը և առաջարկած գները /ՀՀ դրամ/ | | | | Ծառայության ծեռքբերման նախահաշվային գին/ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| | | <<Էկոմիքս>> ՍՊԸ | | <<Մարինե-90>> ՍՊԸ | | |
| | | Առաջարկված գինն առանց ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գին | Առաջարկվա ծ գինն առանց ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գին | |
| 1 | Ձեռքի հեղուկ օճառ | 12400 | 14880 | 20700 | 20700 | 21000 |
| 2 | Պոլիէթիլենային պարկ աղբի համար | 14500 | 17400 | 3000 | 3000 | 3000 |
| 3 | Մաքրող մածուկներ և փոշիներ/ռախշա/ | 1053.33 | 1264 | 1160 | 1160 | 1200 |
| 4 | Հատակը մաքրելու ձող,պլաստմասե, փայտյա | 1413.33 | 1696 | 2900 | 2900 | 3000 |
| 5 | Աղտահանող հեղուկ սանհանգույցի համար | 1986.67 | 2384 | 5560 | 5560 | 5600 |
| 6 | Ափսե լվացող նյութեր | 8875 | 10650 | 14750 | 14750 | 15000 |
| 7 | Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | 663.33 | 796 | 1000 | 1000 | 1000 |
| 8 | Թղթե անձեռոցիկներ երկշերտ | 26000 | 31200 | 39000 | 39000 | 40000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9 | Ափսե լվանալու սպունգ | 9933.33 | 11920 | 3600 | 3600 | 4000 |
| 10 | Էլեկտրական լամպ 100W | 4083.33 | 4900 | 5000 | 5000 | 5000 |
| 11 | Էլեկտրական լամպ 150W | 8200 | 9840 | 7600 | 7600 | 8000 |
| 12 | Խոհանոցի սրբիչ | ---- | ---- | 1500 | 1500 | 1500 |
| 13 | Մաքրող կտորներ | 993.33 | 1192 | 980 | 980 | 1000 |
| 14 | Հատակի լվացման լաթ | 493.33 | 592 | 1960 | 1960 | 2000 |
| 15 | Զուգարանի թուղթ, ռուլոնով | 5333.33 | 6400 | 14500 | 14500 | 15000 |
| 16 | Խմելու համար նախատեսված բաժակներ/հյութի/ | ---- | ---- | 5880 | 5880 | 6000 |
| 17 | սուրճի բաժակներ | ---- | ---- | 5880 | 5880 | 6000 |
| 18 | Աղբարկղ, պլաստմասե | ---- | ---- | 600 | 600 | 600 |
| 19 | Մեկանգամյա օգտագործման բաժակներ | 833.33 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 20 | Ձեռքի թղթե սրբիչներ | | ---- | 5000 | 5000 | 5000 |
| 21 | ռետինե ձեռնոցներ | 980 | 1176 | 4080 | 4080 | 4200 |

Որոշեցին՝

1. Որպես *ՀՍԿ-ՇՀԱՊՁԲ 15/11-17/01* ծածկագրով շրջանակային համաձայնագրով մրցույթ կատարելու ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ N1, N3, N4, N5, N6, N7 N8 N10 N14 N15 N19 N21 չափաբաժինի մասով՝ << Էկոմիքս >> ՍՊԸ –ին, N2, N9, N11, N12, N13, N16 N17 N18 N20 չափաբաժինի մասով՝ << Մարինե-90 >> ՍՊԸ –ին:

2. Որպես *ՀՍԿ-ՇՀԱՊՁԲ 15/11-17/01* ծածկագրով շրջանակային համաձայնագրով մրցույթ կատարելու ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ N1, N3, N4, N5, N6, N7 N8 N10 N14 N15 N19 N21 չափաբաժինի մասով << Մարինե-90 >> ՍՊԸ –ին, N2, N9, N11, N12, N13, N16 N17 N18 N20 չափաբաժինի մասով՝ << Էկոմիքս >> ՍՊԸ –ին

3. Առաջարկել հանձնաժողովի քարտուղար Ա. Սիմոնյանին՝

3.1 Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

3.2 Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

**4-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ժամը 11:00-ին Հանրապետության 49/9 հասցեում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից համապատասխան եզրակացության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 2017թ. փետրվարի 17- ը:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Վ. Մարգարյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Սիմոնյան _____

Ա. Ասատրյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Սիմոնյան _____